

ԻՆՉՊԵՍ ԿԵՆՏՐՈՆԱՆԱԼ ԿՅԱՆՔԻԴ ՎՐԱ

Ապրել հաղթողի նման

Մաս 1

«Եվ ամեն ոք, ով մրցում է, ամեն բանում ծուծկալ է լինում: Արդ նրանք մրցում են, որ մի ապականելի պսակ ստանան, իսկ մենք՝ անապականելի:» Ա Կորնթացիս 9:25

«Քո անձն աստվածապաշտության ն վարժեցրու: Որովհետև մարմնական վարժությունը քիչ բանի համար է օգտակար, բայց աստվածապաշտությունն ամեն բանի համար օգտակար է՝ ունենալով այժմյան ու գալիք կյանքի խոստումը:» Ա Տիմոթեոս 4:7-8

Քո կյանքի վրա կենտրոնանալու համար կենտրոնացիր Աստծո վրա

«Ինչպես որ մեզ նրանով ընտրեց աշխարհն ստեղծելուց առաջ, որպեսզի մենք սուրբ և անարատ լինենք նրա առաջ սիրով:» Եփեսացիս 1:4

- Նա ստեղծել է քեզ
- Նա լավ գիտի քեզ
- Նա ծրագրի ունի քո կյանքի համար

3 ամենօրյա սովորություններ, որոնք քեզ կենտրոնացած կպահեն Աստծո վրա

Ա- Ասա Աստծուն, Թե Նա Ինչքան մեծ է

«Ոհ, Տեր, մեծ Աստված և ահավոր, որ ուխտ և ողորմություն ես պահում քեզ սիրողներին և պատվիրանքներդ պահողներին:» Դանիել 9:4

«Բայց Աստված մեր նկատմամբ իր սերը հայտնեց. երբ մենք դեռ մեղավոր էինք, Քրիստոսը մեզ համար մեռավ:» Հռովմայեցիս 5:8

«Բայց դու երբ աղոթք անես, քո սենյա՛կը մտիր և դուռդ փակած աղոթք արա քո Հորը, որ ծածուկ տեղում է, և քո Հայրը, որ ծածուկ տեղում տեսնում է, հայտնապես կհատուցի քեզ:» Մատթեոս 6:6

Բ- Ասա Աստծուն, Թե Դու Ինչի Կարիք Ունես

«Մեր ամեն օրվա հա՛ցը տուր մեզ այսօր:» Մատթեոս 6:11

«Ոչինչ հոգ մի՛ արեք, այլ ամեն բանում աղոթքով, աղաչանքով և գոհությամբ՝ ձեր խնդրանքները թող հայտնի լինեն Աստծուն: Եվ Աստծու խաղաղությունը, որ ամեն մտքից վեր է, ձեր սրտերն ու մտքերը Քրիստոս Հիսուսով կպահպանի:» Փիլիպպեցիս 4:6-7

- * Աստծո հետ խոսիր, թե ինչ է քեզ հետաքրքրում
- * Աստծո հետ խոսիր առաջին երկու բույեների ժամանակ
- * Աստծո հետ խոսիր քո հատուկ կարիքների մասին

«Խնդրեցե՛ք, և կտրվի ձեզ, փնտրեցե՛ք ու կգտնեք, դուռը բախեցե՛ք, ու ձեզ համար կբացվի:» Մատթեոս 7:7

Գ- Հավատա Աստծուն Եվ Կատարիր Հաջորդ Քայլը

«Տիրոջն ապավինիր քո բոլոր սրտովը, և քո հասկացողությանը մի՛ վստահիր: Քո բոլոր ճանապարհներումը ճանաչիր նրան, և նա կուղղի քո ճանապարհները:» Առակաց 3:5-6

«Ես ինձ չեմ համարում, որ հասել եմ, բայց մի բան կա. հետևի բաները մոռանալով՝ դեպի առջևում եղողներն եմ ձգտում: Հետևում եմ դեպի նպատակը՝ Հիսուս Քրիստոսով Աստծու վերին կոչման մրցանակին:» Փիլիպպեցիս 3:13-14

Հաջորդ Կիրակի:
Ինչպես Հավատքի Մեջ
Աշխույժ Մնալ
 Հովիվ Սարո Խաչիկեան